ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31 — 1889 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31 — № 98

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ է մնում անելու.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Հին-Նախիջևանից· Նամակ Գօրիսից· Ներքին լուրեր·—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Պանդխտութիւնը Թիւրքաց Հայաստանում. Արտաքին լուրեր·—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ·— ԲՈՐՍԱ·— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ· — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Տպաւորութիւններ·

ԻՆՉ Է ՄՆՈՒՄ ԱՆԵԼՈՒ

Եթէ ուշադրութեամբ դիտելու լինենք Անդրկովկասի հայ ազգաբնակութեան վիճակը, այն համոզմունքի կը հասնենք, որ կարծես թէ ամբողջ նիւթական ոյժը հետզհետէ դուրս է գալիս հայերի ձեռքից։

Գիւղական ազգաբնակութիւնը հողի պակասութիւն է զգում և ոչինչ ելք չէ գտնում իր ծանր դրութիւնից դուրս գալու համար, մանր առևտուրը ընկնում է և այլ ևս անզօր է ապահովել առևտրով պարապողների վիճակը, այնպէս որ մեր առևտրականները անդադար ձգտում են գաղթելու դէպի ուրիշ երկիրներ, վերջապէս խոշոր առևտուրը և խոշոր արդիւնագործութիւնը հայ կապիտալիստների ձեռքերից հետզհետէ անցնում է մեր երկիրն եկած օտար կապիտալիստների ձեռքը, որոնցից ամենանշանաւորն ու վտանգաւորն է՝ հարուստ Բօտշիլդ։

Հայը, որը առհասարակ, եւրոպացու պէս աշխատասէր չէ, հայը, որը մինչև այժմ միշտ սովոր էր համեմատաբար հեշտ աշխատանքով կարճ ժամանակամիջոցում մեծ կարողութիւններ ձեռք բերելու, ինչպէս օրինակ առևտուրն ու կապալները, հայը, որը մինչև վերջին տարիները երբէք մրցող չէ ունեցել մեր երկրում,—այժմ յուսահատվում է։

Հայը ժամանակի պահանջման չը յարմարվեց, անշարժ մնաց, յամառութեամբ մերժեց տնտեսութեան, արդիւնագործութեան, արհեստների նոր ձևերն ընդունել, և հիմա նոր է նկատում որ ուշ է արդէն։

Երբ որ իր ժամանակին մի նոր միտք ես յայտնում, մի օգտաւէտ, ժամանակի պահանջման համեմատ խորհուրդ ես տալիս,—հայը զայրանում, վրդովվում է, քեզ իր անձնական թշնամի է համարում... Իսկ երբ որ նախատեսնվածդ իրականանում է, այն ժամանակ հայը սկսում է լոց լինել, ապարդիւն կերպով աղաղակել ու գանգատվել։

Եւ այդ նոյն երևոյթը կրկնվում է ոչ թէ միայն հայի նիւթական կեանքի մէջ, բայց և նոյն իսկ հայի մտաւոր և հոգևոր կեանքի մէջ։ Իր ժամանակին յայտնվածը, առաջարկվածը՝ մերժվում է հայից, իսկ երբ որ բանը բանից անցել է, երբ վտանգը եկել ու գլխաը հասել է արդէն,—այն ժամանակ նոյն հայը, որը միշտ խուլ էր լոգիկայի ձայնին ու անընդհատ առաջադիմութեան, ժամանակակից վերանորոգութեան անհրաժեշտ պահանջներին՝ նոյն հայը, ասում եմ, անչափահաս մանուկի պէս, ուրիշ ելք չէ գտնում իր անմխիթար դրութիւնից դուրս գալու համար, եթէ ոչ վայ տալ իր գլխին.... Մի մի անգամ մարդ այն տխուր եզրակացութեանն է գալիս թէ սուտ է այն կարծիքը, իբր թէ հայը աշխատասէր և առաջադիմութիւն սիրող ազգ է.... Տխուր իրականութիւնը շատ անգամ հակառակն է ցոյց տալիս մեզ.... Նա ցոյց է տալիս մեզ որ մեծ մասամբ հայը տոկունութեամբ աշխատել չը գիտէ, չը գիտէ յարմարվել ժամանակի պահանջներին, չէ սիրում առաջադիմել, հինը թողնել, նորն ընդունել, սովոր է հեշտ աշխատանքին, ընտելացած չէ ինքնագործութեանն ու ինքնօգնութեան, վերին աստիճանի անշարժ, անդործ բնաւորութիւն ունի, վախենում է որ և է փոփոխութիւնից և իր անձնական թշնամի է համարում այն մարդուն, որը նրան ըզգուշացնում է հեռաւոր կամ մօտաւոր վրտանգների մասին, այն մարդուն, որը առաջարկում է նրան ժամանակի արագընթաց պահանջման համեմատ՝ անդադար վերանորոգել իր թէ նիւթական, թէ մտաւոր և թէ հոգևոր կեանքի հնացած և այժմ արդէն անպէտք դարձած հասարակական կազմակերպութիւնը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Օգոստոսի 22-ին

Անցեալ օրը, կիրակի, օգոստոսի 20-ին Կարմիր վանքում կատարվեց Ցովսէփ ծ. վարդապետ Փինաչեանցի՝ Հ. Նախիջևանի յաջորդի թաղումը։ Բաւական մարդիկ քաղաքից գնացել էին վանքը արժանապատիւ յաջորդի յուղարկաւորութեանը ներկայ գտնվելու։ Բայց գլխաւորապէս շատ էին եկել Կարմիր վանքի մօտակայ գիւղերի հայ շինականները։ Ց. վ. Փինաչեանց մի չաբաթ առաջ գնացել էր վանքը բժշկի խորհրդով՝ Երասխում լողանալու համար։ Որպէս է նա վախճանվել, դժուար է իմանալ, որովհետև դրական ոչինչ յայտնի չէ, բայց շատերը պնդում են թէ՝ նրա մահը առաջացել է վայր ընկնելուց։ Ցովսէփ ծ. վ. բնիկ ալէքսանդրապոլցի էր. նա եղած էր յաջորդ և Ղարաբաղի թեմում. որպէս մենք տեղեկացանք, այնտեղ ևս նրան սիրում էին։ Հանգուցեալին վաղուց չէ, որ մենք ճանաչում էինք, սակայն տեղացիք արդէն վեց տարի է, որ ճանաչում են նրան իբրև յաջորդ։ Հին-Նախիջևանի և նրա գաւառի ամբողջ հայ ազգաբնակութիւնը սիրում և յարգում էր նրան, որովհետև Ցովսէփ ծ. վ. ազնիւ, պարտաճանաչ եկեղեցական էր, բարի և ողորմած մարդ էր։ Երբէք Հ. Նախիջևանի 2 եկեղեցիները և ուսումնարանը այն բարեկարգ դրութեան չէին հասած, որին հասան նրա ժամանակ։ Նա բարձր ուսում չունէր, բայց այնքան գիտէր, որ կարող էր շատ օգտաւէտ քարոզներ խօսել ժողովրդին. երբեմն նա գրում էր և ոտանաւորներ։ Ով որ ճանաչում էր Ցովսէփի վարդապետին, ճանաչում էր նրան իբրև արժանաւոր, գործունեայ և եռանդոտ հովիւ և առհասարակ որտեղ որ եղած էր հանգուցեալը, ամեն տեղ վայելում էր սէր և համակրանք իր ժողովրդի կողմից։ Նա վախճանվեց 41 տարեկան հասակում, ուրեմն դեռ երիտասարդ։ Ով գիտէ Հին-Նախիջևանը կունենայ այսուհետև այս աստիճան բարեխիղճ յաջորդ թէ ոչ։

Ա. Ե.

ՆԱՄԱԿ ԳՕՐԻՍԻՑ

—

Օգոստոսի 23-ին

Զանգեզուր գաւառի մի քանի թուրք գիւղերում, եղջիւրաւոր անասունների մէջ սաստիկ տարածված է մի տեսակ հիւանդութիւն (արիւնահոս որովայնալուծութիւն), որը շատ նման է անասունների ժանտախտին։ Այդ տարափոխիկ հիւանդութիւնը սկզբում երևացել էր Շուշու գաւառի Ալիմարդան գիւղում, որի գիւղացիները ամառը թափառում են դէպի մեր գաւառի ամրանոցները։ Ճիշդ տեղեկութիւններից երևում է, որ այդ հիւանդութիւնից մօտ 442 անասուններ են փչացել։

Այստեղի գիւղական բժիշկը ստանալով պատշաճաւոր հրամանագիր, ուղևորվել էր դէպի յիշեալ գիւղերը, հիւանդութեան առաջն առնելու նպատակով, բայց այդ ճանապարհորդութիւնը անօգուտ անցաւ։ Գօրիսի գիւղական հիւանդանոցը համարեա ամեն օր լի է հիւանդներով, և ահա բժիշկը մտածելով որ մարդիկ աւելի կարոտութիւն ունեն իր խնամքի մէջ, չուտ վերադարձաւ այստեղ։

Այժմ լուր կայ, որ մի անասնաբոյժ է եկել վերոյիշեալ հիւանդութեան առաջն առնելու։ Հարկաւոր է մեծ ուշադրութիւն դարձնել անասունների հիւանդութեան վրա, քանի որ գիւղացիների ապրուստի միակ միջոցն է հողագործութիւնը և անասնապահութիւնը։

Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մի քանի ժամանակ առաջ լուր հաղորդեցինք, որ Ղազախի հաշտարար դատաւոր Կանչելի պէտք է նշանակվի Էջմիածնի սինոդի պրոկուրոր։ Այժմ պաշտօնապէս արդէն յայտարարված է, որ Էջմիածնի սինոդի պրոկուրոր նշանակված է Կանչելի։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Ազգային պատրիարքարանը Կարնոյ գաւառի համար առաջնորդական ընտրելիներու ցուցակ մը պատրաստած է, որուն մէջ են՝ Մելքիսեդէկ եպիսկոպոս, Գրիգորիս եպիսկոպոս (Հնդկաստանի և Ջուղայի Նախկին առաջնորդը), Աղէքսէեան Գրիգորիս ե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՆԱՆՑ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՑՈՒՄ

—

Ֆրանսիացի կինը յայտնի է որպէս վերին ատիճանի ազգասէր և անձնուէր կին։ Ֆրանսիական ամբողջ պատմութիւնը վկայ է այդ ճշմարտութեան. ով կարդացել է ֆրանսիական պատմութիւնը, յիշում է այնպիսի անուններ, ինչպէս Ֆրանսիան անգլիական լուծից ազատող Ժանդարկ, մեծ յեղափոխութեան ժամանակ արիւնարբու բռնակալ-դիկտատոր Մարատին սպանող Շարլօտ Կօրդէ, ազատութեան դաղափարների համար գլխատված տիկին Ռօլան։ Ֆրանսիական գրականութեան պատմութեան հետ ծանօթ անձինք գիտեն թէ ինչ նշանաւոր դեր են խաղացել Ֆրանսիացի կանայք հայրենիքի մտաւոր աշխարհում. ում ծանօթ չեն տիկին Ռէկամիէի, տիկին դը-Ժանլիսի, տիկին դը-Ստալի, տիկին Ժօրժ Սանդի, տիկին Ժիւլիէտ Ադանի անունները...

Վերջին ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակակիցները վկայում են որքան անձնուէր էր Ֆրանսիուհին իր հայրենիքի դժբաղդ տարվայ ժամանակ՝ թէ պատերազմի դաշտում որպէս հիւանդ ու վիրաւորված զինուորների մասին հոգացող, թէ Պարիզի պաշարման և սովի ժամանակ, որպէս մարդուն քաջալերող, անասելի զըրկանքները համբերութեամբ և անվհերութեամբ տանելու պաշտելի օրինակ ցոյց տուող....

Եւ պէտք է զարմանալ որ ֆրանսիացի կինը, որին ֆրանսիացիք միայն արտաքուստ էին յարգում միշտ, բայց իրապէս մերժում էին նրան թէ պատշաճաւոր կրթութեան, թէ քաղաքացիական (այլ ևս չեմ ասում քաղաքական) իրաւունքների տալը ինչպէս հասարակութեան մէջ, այնպէս էլ ընտանեկան շրջանում,—պէտք է զարմանալ, ասում եմ, որ անկիրթ և իրաւազուրկ ֆրանսիուհին, ինքնաճանաչութեամբ, քաղաքացիական պարտաճանաչութեամբ և ինքնակրթութեամբ կարողացաւ յայտնվել և նշանաւոր դառնալ հասարակական զրեթէ բոլոր ասպարէզներում։

Եւ ճշմարիտ, ինչ էր դարերից ի վեր Ֆրանսիացի կնոջ տուած կրթութիւնը. Ֆրանսիացի աղջիկը ինչքան էլ ունեոր լինէր, ուրիշ կրթական հաստատութիւն չունէր իր ուսման ծարաւը յագեցնելու համար, եթէ ոչ իր հայրենիքի վանական ողորմելի դպրոցները։ Մինչև վերջին տասնեակ տարիները ամբողջ Ֆրանսիայում չը կար ոչ մի աշխարհական իգական դպրոց, ոչ տարրական, ոչ էլ միջնակարգ դպրոց, այլ ևս չեմ խօսում բարձրագոյն դպրոցների մասին....

Միայն այդ վերջին մի քանի տասնեակ տարիներ, ներկայ հանրապետութեան ժամանակ, Ֆրանսիական հասարակաց կարծիքը կարողացաւ կոտրել կաթոլիկ հոգևորականութեան դարևոր, աւանդական ոյժը, կարողացաւ հայրենիքի իգական սեռի համար բանալ տարրական, միջնակարգ, արհեստաւորաց և նոյն իսկ բարձրագոյն դպրոցների՝ համալսարանների դռները։

Ինչպէս միշտ և ամեն տեղ, Ֆրանսիայումն էլ օրէնսդրութիւնը, պետական հայեացքները՝ միշտ յետ էին մնում հասարակաց կարծիքից, ժամանակի անհրաժեշտ պահանջներից, ընդհանուր մարդկային առաջադիմութիւնից, մարդկային կեանքի կանոնաւոր և արագընթաց հոսանքից։ Կինը ինքնաբերաբար ձգտում էր, թէև դանդաղ, բայց հաստատ քայլերով դէպի առաջ, տոկուն ինքնագործութեամբ հետզհետէ ձեռք էր բերում այս և այն հասարակական իրաւունքներ, դիրք և աշխատանք,—իսկ օրէնքը շարունակում էր խուլ մնալ առաջադիմութեան պահանջող ձայնին, ժամանակի կարիքներին.... Հասարակաց կազմակերպութիւնը զգալի և նոյն իսկ արմատական փոփոխութիւններին էր ենթարկվում, իսկ օրէնսդրութիւնը նոյն էր մնում, յամառում էր վարել հասարակութիւնը նոյն հնացած և հասարակութեան այժմեան կազմակերպութեան մէջ անգործադրելի, նրա համար անպէտք դարձած օրէնքներով։ Ինչպէս եւրոպական ուրիշ քաղաքակիրթ երկիրներում, Ֆրանսիայումն էլ կինը լուծեց իր իրաւունքների, իր աշխատանքի խնդիրը բուն գործնական կերպով. կինը սկսեց պարապել՝ բանաւորութեամբ, մանրավաճառութեամբ, ընդարձակ առևտրով, մանկավարժութեամբ, գրականութեամբ, արհեստով, գեղարուեստով, արդիւնագործութեամբ և վերջապէս բժշկութեամբ....

Մի խօսքով կինը որոնում և ձեռք էր բերում հասարակաց այնպիսի բուն գործնական պարապմունքներ, որոնց արգելելը տղամարդու ոյժից վեր էր, քանի որ նրանք չէին կրում քաղաքական բնաւորութեան նշոյլն անգամ, մանաւանդ որ տղամարդն էլ պարզ տեսնում էր որ այդ տեսակ պարապմունքներից մի քանիսներում կինը, իր բնածին ընդունակութեամբ, մարդու անհրաժեշտ օգնական էր դառնում, թէև շատ անգամ նոյն իսկ դերազանցում էր նրան այդ տեսակ պարապմունքների կատարման մէջ։

Շրջեցէք այս րոպէիս ամբողջ Պարիզում և կը տեսնէք որ ամեն խանութում, հիւրանոցում, ռէստորանում, ֆաբրիկայում, գրասենեակում՝ կինը ոչ թէ միայն գործակատար է, բայց և հաշւապահ է։ Փողի հաշիւը ընտանեկան նեղ շրջանումն էլ, սկսած բանաւորական ընտանիքից մինչև հարուստ հիւրանոցի տիրոջ ընտանիքը, կամ առևտրական նշանաւոր ֆիրմայի ընտանիքը՝ կնոջ ձեռքումն է։

Կանանց կօնգրէսի ժամանակ իրաւաբան Բէօրդելէ, որը կանանց քաղաքացիական իրաւունքի մասին դասախօսութիւն էր կարդացել, հաղորդել էր իր դասախօսութեան ժամանակ, ի միջի այլոց, հետևեալ բնաւորիչ էպիզոդը։

«Երբ դեռ շատ երիտասարդ ժամանակ, ասեց նա, ես նոր էի սկսել իմ իրաւաբանական ասպարէզը, նշանաւոր փաստաբանի օգնական գրվելով, մեր գրասենեակը շատ անգամ մտնում էին իրանց գանգատները մեզ ներկայացնելու ու մեր

պիսկոպոս, և երեք վարդապետ, որոնց մէջն է պատրիարքական փոխանորդը»։

—

Թիւրքաց Հայաստանի Խիզան գաւառից մեզ գրում են. «Երկու քիւրդեր՝ Քէրիմ-խան պէյ և Մուսթաֆա-պէյ իրանց աւազակներով կը կոխեն Խիզան գաւառի Թառոնց գիւղը և կը յափշտակեն Աւետիսի և նրա եղբօր Մելքոնի կիները և կը տանեն Քէրիմ-խան պէյի տունը, ուր կը լսկեն նոցա։ Մելքոնի ազգականներէ մին կը գնայ Քէրիմի տունը աղաչելու, որ կիները արձակեն։ Բայց դնա կը սպանեն»։

—

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնի համար ընտրված պ. Յովհաննէս Սպենդիէրեան արդէն մտել է իր տեսչական պաշտօնավարութեան մէջ։

—

Վերջապէս եղանակը հովացել է ԹԻՖԼԻՍՈՒՄ և ամենքը սկսեցին այլ և այլ ամարանոցներից հետզհետէ վերադառնալ դէպի Թիֆլիս։

—

Կրկին յիշեցնում ենք մեր այն բաժանորդներին, որոնք մինչև այժմ չեն վճարել «Մշակի» թէ ներկայ և թէ անցեալ տարվայ բաժանորդագինը, որ ժամանակ է արդէն ուղարկել խմբագրութեանը իրանց վրա մնացած ապառիկները։ Գուցէ այս կամ այն քաղաքում շատերը վճարել են իրանց բաժանորդագինը, բայց փոխանակ փոստով ուղղակի «Մշակի» խմբագրութեան անունով դրամն ուղարկելու, յանձնել են այդ դրամը այս կամ այն պարոններին, իսկ սրանք ծախսել են այդ փողերը և խմբագրութեանը չեն ուղարկում մեզ պատկանելի դրամը։

—

Մեզ գրում են հետեւեալը Լօռու Շահնազար հայ-կաթոլիկ գիւղից. «Ինչպէս այլ և այլ կողմերի, այնպէս էլ Ալաշկերտի հայերը, նեղվելով մահմէտականների լուծից, դեռ ևս 1820 թ-ին, գաղթելով Ալաշկերտից, դալիս բնակվում են Լօռու Շահնազար գիւղում, կարծելով որ այդ իրանց նոր բնակատեղում վերջապէս կը գտնեն կատարեալ անդորրութիւն։ Բայց այդտեղ էլ երկար ժամանակ այլ և այլ հալածանքներ կրելով վրաց թագաւորների կողմից, միայն այդ թագաւորութեան վերացվելով, ճշմարիտ գտնում են իրանց անդորրութիւնն ու երջանիկ խաղաղ կեանքը։ Այժմ շահնազարցիք հարուստ են, ունեն մեծ հողեր, այն է 5,000 դեսիատին, որ նրանք 1878 թ-ին, իրանց առաջնորդ Սարգիս վարդապետ Եաղճեանի խորհրդով 60,000 բուբլով են գնել մասնաւոր կալուածատէրերից։ Շահնազարցիք սահմանված ունեն իրանց համար մի գիւղական կանոնադրութիւն, որը բաղկացած է 21 յօդուածից, և որը վերաբերվում է թէ գիւղի ներքին կարգապահութեանն ու նրա վարչական գործերին և թէ գիւղի ուսումնարանական գործին ու հոգաբարձուների պարտաւորութիւններին»։

—

Մեզ գրում են. «Շուտով լոյս կը տեսնեն մի տետրակի մէջ ժողովված այն բոլոր զրագրութիւնները, որոնք եղած են Կօջորում հայ քահանայ նշանակելու մասին։ Ասում են, որ այդ զրագրութիւնները շատ հետաքրքիր են իրանց բովանդակութեամբ և պարզ ցոյց են տալիս ոմանց գործողութիւնների եղանակն ու ոգին»։

—

«Моск. Вѣд.» լրագիրը լսել է, որ մշակվում է մի օրինագիծ, որի նպատակն է միջոցներ ձեռք առնել հանքագործարաններում աշխատող բանւորների բարոյականութիւնը բարւոքելու համար։

—

«Новое Время» լրագիրը լսել է, որ սկզբունքով վճռված է յանձնել զէմստվոյի դպրոցները հոգևոր իշխանութեան։ Այդ դպրոցները կրելու են ծիսական-եկեղեցական անունը։ Զէմստվոյի նախկին դպրոցները հոգևորականութեան յանձնելու նպատակով կանոններ մշակելու համար՝ կազմվում է մի յանձնաժողով, որը բաղկացած կը լինի ներքին գործերի մինիստրութեան, ազգային լուսաւորութեան մինիստրութեան և սինոդի ներկայացուցիչներից։

—

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է, որ օգոստոսի 27-ին իր արտաքսմանեան ճանապարհորդութիւնից Պետերբուրգ վերադարձաւ պատերազմական մինիստրը։

—

Օգոստոսի 28-ին բացվել է Եարօսլավլում այգեգործական ցուցահանդէսը։

—

Կ. Պոլսից գրում են. «Օգոստոսի 17-ին, շաբաթ օր, վանից Կ. Պոլիս հասած բոլոր նամակները փոստի մէջ բացվելուց յետոյ միայն յանձնվել են իրանց տէրերին»։

—

Մեզ ուղարկված է տպագրելու հետեւեալ նկատողութիւնը Կարսից. «Մի երիտասարդ ուսուցիչ, որը մեծ սէր ունի բարձր ուսում ստանալու, սրանից մի քանի տարի առաջ խոստանում է իր վաճառական եղբայրներին, իր ստացած առձիկը նրանց տալ իւրաքանչիւր տարի, որ նրանք էլ՝ եղբայրաբար այդ փողերը վաճառականութեան մէջ գործածելուց և շահեցնելուց յետոյ, նպաստեն իրանց եղբօր բարձր ուսում ստանալուն։ Այս ամառը այդ երիտասարդը վերջապէս հաստատ վճռում է գնալ շարունակելու իր ուսումը և այդ նպատակով՝ առաջուց հրաժարվում է իր պաշտօնից և վերադառնում է Կարս իր եղբայրների մօտ, որ յայտնէ նրանց իր մտադրութիւնը։ Նա առաջուց բոլորովին համոզված է եղել, թէ նիւթական ոչ մի արգելք չէ կարող պատահել, որովհետև նրա յոյսը իր խնայած փողերի վրա էր, իսկ այդ փողերը իր հարատատ եղբայրների մօտ շահեցվում, աճում, աւելանում էին.... Այսպէս էր մտածում երիտասարդը, երբ վերադառնում էր իր պաշտօնատեղից դէպի հայրենիք՝ եղբայրների մօտ, որ շուտով պատրաստվի գնալու։ Կարս վերադառնալուն պէս՝ երիտասարդը յայտնում է իր եղբայրներին իր ցանկութիւնը և խնդրում է նրանցից իր խնայած փողերը և եղբայրական օգնութիւնը։ Վաճառական եղբայրները վճռողապէս մերժում են նրա խնդիրը, և սկսում են խնդրել, որ նա իր մօտ եղած փողերն էլ իրանց տայ, որ կարողանան վճարել իրանց պարտքերը։ Այդպիսով երիտասարդը իր փողերը չէ ստանում, և խաբվելով իր յոյսերի մէջ, զրկվում է բարձր ուսում առնելուց՝ եղբայրների անխիղճ ագահութեան շնորհով»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Այս տարվայ Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսի համար Ախալքալաքի գաւառից շատ քիչ իրեր և ձեռագործներ են ներկայացվելու, որովհետև գիւղական ազգաբնակութիւնը հիմնաւորապէս չէ հասկանում ցուցահանդէսի նպատակը. քաղաքիս արհեստաւորներից մի երեքը իրանց արհեստին համապատասխան պատրաստում են մի քանի իրեր։ Սոցա մէջ նշանաւոր և առաջին տեղը բռնում է դոնդաղ-սաղ Զախմախճեանի շինած և ինքնուրոյն մտածված մի փոքրիկ հրացանը։ Այս հրացանը տեսնողը չի հաւատայ, որ սա շինված է մի անկիրթ, ոչ մի տեղ ուսում չը ստացած, ոչ մի արհեստաւորի մօտ կամ գործարանի մէջ չաշխատած մի արհեստաւորի ձեռքով. մի կողմ թողնելով այդ հրացանի մանրամասն նկարագրութիւնը, միայն այսքանը կասենք, որ հրացանը դատարկվում է այն արագութեամբ, ինչ արագութեամբ արձակվում են բերդանկա, պիրօղի և մարտինի հրացանները։ Ուղղելով խօսքս ցուցահանդիսի մասնաժողովին, առաջարկում եմ, որ եթէ այդ մասնաժողովը ցանկանում է, որ հետագայ ցուցահանդէսներին դաւառական և գիւղական ազգաբնակութիւնները աւելի հետաքրքրված լինեն այդ հանդէսներով և մասնակցեն նրանց՝ թող չը բաւականանան միմիայն պաշտօնական թղթակցութիւններով և յայտարարութիւններով, որոնք միայն շատ հարևանցի կերպով պօլիցիականների միջոցով հաղորդվում են նրանց, այլ պէտք ունենայ ամեն մի գաւառում իր ագենտները, որոնք մտնելով ամեն դասակարգերի մէջ՝ հասկացնէին ցուցահանդէսների նպատակը և նշանակութիւնը։ Այս օրերս երկու ֆուրգոն զանազան փալասներ և իրեր ուղարկվեցան այստեղից Կովկասեան ցուցահանդիսի համար»։

—

Մի մասնաւոր նամակով հետեւեալ տեղեկութիւններն է ուղարկված մեզ Թիւրքաց Հայաստանի Տիգրանակերտ քաղաքից։ «Տիգրանակերտ նահանգի, Հազրօ գաւառի նկարագրութիւնն և հայոց անտանելի վիճակն արդէն յայտնի է։ Այդ գաւառի բռնապետ Սեվդին պէյը իւր կեղեքումներով և հարստահարութիւններով գերազանցեր է յայտնի արիւնռուչտ Մուսա-պէյին։ Վերոյիշեալ չարագործը՝ իր հօրմէ մնացած բազմաթիւ եղեռնագործ ծառաների միջոցաւ, ամեն կերպ չարիքներով, գողութիւններով, հարստահարութեամբ կը կեղեքէ խեղճ, անօգնական, անզէն հայերը, բացարձակ իր անձնականի համար տուրքեր ժողովելով, իր արկղեր ոսկով կը պարարտացնէ։ Վերջապէս Հազրօ գաւառի երբեմն փարթամ հայերը չարունակ հարստահարվելով Սեվդին պէյէն, ճարահատեալ մատուցեր են բազմաթիւ սրտաճմլիկ աղերսագրեր Տիգրանակերտի կուսակալին։ Սոյն գաւառի շատ կողմերում հայերը անօթի մնալով, սկսան գաղթել Տիգրանակերտ։ Նա որ մի քանի կօպէկ ունէր, նա էլ իր վերջին կօպէկը աղերսագրի տալով, դիմեց կուսակալին. ասոր վրայ տեղւոյն կուսակալութիւնը գաղթական հաղրօցիներին ղրկեց ի Սիլվան, հետերնին իբր քննիչ ղրկելով հաճի Ճարճիս-զադէ Արզլ-Կադր-փաշան, որը ընդ մէջ Հազրօի և Տիգրանակերտի շատ մը գիւղեր ունի, որոնցմէ տարեկան չորս հազար լիրայի չափ եկամուտ կառնու։ Սեվդին պէյէն մնաս մը չը ստանալու համար, թիւրքահայոց իրաւունքն և իրաւախոհութիւնն յորդորելով ղրկեց իրենց բնակարանները, որոնք ապագայ մնասակար հետեւանքը խորհելով, իրենց գոչքերը, ընտանիք և զաւակները հաւաքելով, ճանապարհ կընկնին ի Տիգրանակերտ։ Հազիւ մէկ ժամ կը հեռանան ի Հազրօէ, Սեվդին պէյի գործիքները, ծառաներու հետ միասին կը պաշարեն թշուառ հայերը և թէ սուտ խոստումներով, և թէ ահացնելով ետ կը դարձնեն. ապագան անծանօթ է թէ ինչ կերպ կը լինի։ Բուն իսկ Տիգրանակերտ քաղաքին մէջ այլ և այլ տեսակ հարստահարութեանց ենթակայ են հայերը։ Տիգրանակերտու սուրբ Սարգիս եկեղեցու վարժարանի հարցաքննութեան և պարգևաբաշխութեան առթիւ կարդացած ճառերն, Մուարիֆի Միւդուրը պաշտօնապէս ուղեց և տարաւ։ Հետեանքը կը հաղորդեմք։ Ոմն Ցարութիւն, նորերս կալւածական տուրքի համար զանակոծուելով բանտարկեցաւ։ Եթէ գաղղիական փոխհիւպատոսի միջամտութիւնը տեղի չունենար, միւս անտէր հայոց պէս, օրերով բանտերուն մէջ պիտի տանջուէր։ Կը լսենք թէ Ֆրանսիայի փոխհիւպատոսը պիտի միջամտէ այդ օրինակ գործերու մէջ»։

—

ՕԴԵՍԱՑԻՑ մեզ գրում են, «Օգոստոսի 22-ին սովորականին համեմատ կատարվեց Օդէսայի հիմնարկութեան տարեդարձի հանդէսը։ Միխայէլեան վանքում պատարագից յետոյ հոգևորական դասը, չքեղ զգեստաւորված, առաւօտեան ժամը 11-ին մօտ՝ գիմնազիայի, ըէլական դպրոցի և այլ ուսումնարանների աշակերտներով ու աշակերտուհիներով, թափօրով, որը այստեղ յայտնի է կրեստնի խօդ անունով, նոյն վանքից ուղևորվելով դէպի բուլվարը և այնտեղ Օդէսայի հիմնադիր Դը-Ռիշելիէի արձանի առաջ մաղթանք կատարելուց յետոյ, Եկատերինեան փողոցով Սաբանի ընտրութիւնների գործին, չը նայելով որ այդ դատարանի հետ կապված են նրա կենսական ամենանշանաւոր շահերը, չը նայելով որ նա տղամարդուն հաւասար՝ իր նիւթական շահերին վերաբերեալ անդադար դատեր ունի նոյն առևտրական դատարանում։ Բայց չը յուսահատվինք. եկող տարի մենք կրկին կը ներկայացնենք նոյն խնդրագիրը պատգամաւորների ժողովին և յոյս ունենանք որ մեր պաշտպանած օրինագիծը վաղ թէ ուշ հաւանութիւն կը ստանայ և սենատից, որտեղ նստած են մարդիկ, որոնք թէև սկզբունքով համաձայն են յիշեալ օրինագիծն ընդունելու անհրաժեշտութեան հետ, բայց որոնք պաշարված են դեռ ևս մի անգիտակցական աւանդական նախապաշարմունքով կնոջ, որպէս հանրապետութեան քաղաքացու, ամենատարրական իրաւունքների դէմ։

Ցեսնում էք, ուրեմն, թէ այս իմ յօդուածից, թէ Պարիզից գրած իմ թղթակցութիւններից, որոնց մէջ ես նկարագրում էի կանանց կօնգրէսը ու Պարիզի իգական արհեստաւորաց դպրոցները և աշխատեցի ծանօթացնել ընթերցողին պ. Բեօրդելէի կարդացած դասախօսութեան հետ կանանց քաղաքացիական իրաւունքների մասին,—որ կինը Ֆրանսիայում զօրաւոր ջանքեր է անում այժմ դուրս գալու քաղաքացիական այն անչափահաս դրութիւնից, որի մէջ նա գտնվում էր դարերից ի վեր։

Գրիգոր Արծրունի

պաշտպանութիւնը խնդրելու՝ կամ մի որ և է մանրավաճառ, կամ մի որ և է բանւոր։ Սկսելով բացատրել մեզ իրանց նիւթական դրութիւնը, իրանց դրամական հաշիւները, նրանք միշտ չփոթվում, խառնվում էին և մենք ոչինչ պարզ եզրակացութիւն չէինք կարող դուրս բերել նրանց պատմածներից.... Վերջը, համբերութիւնը կորցնելով, մենք դիմում էինք գանդատաւորին ասելով նրան՝ գնացէք կանչեցէք ձեր կնոջը... Կինը գալիս էր և իրաւ աւելի լաւ, աւելի պարզ կերպով էր բացատրում իր մարդու թէ նիւթական դրութիւնը, թէ նրա ընտանեկան ու գործնական հաշիւները.... Ցայտնվում էր միշտ, որ մանրավաճառի, կամ բանւորի դրամական հաշիւները ոչ թէ ինքն տղամարդն էր վարում, այլ նրա կինը...»

Եւ մինչդեռ կատարված իրողութիւն է, որ կինը իր տոկուն աշխատանքով, իր ընդունակութեամբ գրաւել է արդէն հասարակութեան մէջ մի հաստատ գործնական դիրք, այդ կերպով լուծելով կնոջ իրաւունքի և աշխատանքի խնդիրը,—հասարակաց կարծիքը և օրէնքը չարունակում են յամառել իրանց հնապաշտ համոզմունքներում, իրանց աւանդական անշարժութեան մէջ, ակներև հակասութիւն ներկայացնելով կեանքի իրականութեան հետ։

Կինը դարձել է ընդունակ մանկավարժ,—բայց հասարակաց աւանդութիւնը մերժում է դաստիարակ, վարժուհի, վարժապետ կնոջ՝ նոյն պաշտօնները վարող տղամարդուն հաւասար ռոճկի տալը....

Կինը իր անձնուիրութեամբ և ընդունակութեամբ ապացուցել է որ կարող է նոյնչափ մեծ խնամքով հոգալ թէ պատերազմի ժամանակ և թէ հիւանդանոցներում՝ հիւանդների և վիրաւորվածների մասին,—բայց օրէնքը մերժում է նրան տղամարդուն հաւասար բժշկապետի տիտղոս ձեռք բերելը և հասարակութեան մէջ պաշտօնական բժշկական պաշտօններ վարելը....

Կինը ապացուցել է որ վերին աստիճանի ընդունակ է վարել թէ ընտանեկան և թէ առևտրական հաշւապահութիւն, նա է այս բոպէիս Պարիզի և դաւառական քաղաքների գրեթէ ամեն առևտրական և արդիւնագործական հիմնարկութիւններում իր մարդու օգնականն ու հաշւապահը,—բայց Ֆրանսիայի քաղաքացիական օրէնսդրութեան զօրութեամբ պսակված կինը մի տեսակ անչափահաս էակ համարվելով, առևտրով պարապելու իրաւունք ունենալու համար նա ամեն անգամ պէտք է դրա համար առանձին թոյլատրութիւն խնդրի իր մարդուց և ապա միայն օրէնքը թոյլատրում է նրան առևտրով պարապելու։

Կինը Ֆրանսիայում վարում է այժմ իրապէս ամեն տեսակ առևտրական մեծ գործեր, արդիւնագործական մեծ ֆիրմաներին գլուխ է կանգնած, ունի ֆինանսական յարաբերութիւններ բանկերի հետ, դրամ է փոխ առնում և փոխ տալիս, ստորագրում է մուրհակներ, ամեն տեսակ ֆինանսական օպերացիաներ է վարում և այլն,—բայց երբ անցեալ տարի Պարիզի առևտրական կանայք խնդիրը տուեցին կառավարութեան՝ առևտրական դատարանների ընտրութիւններում մասնակցելու իրաւունք ունենալու համար և նրանց այդ խնդիրը հաւանութիւն ստացաւ նոյն իսկ ֆրանսիական պատգամաւորների ժողովում,—նորերումս ֆրանսիական սենատը, երբ հերթն իրան հասաւ խնդիրը քննարկելու՝ մերժեց ֆրանսիացի առևտրական կանանց առևտրական դատարանների ընտրութիւններում մասնակցելու իրաւունքը։

Երբ իմ ներկայութեամբ կանանց կօնգրէսի վերջին նիստում այդ ցաւալի լուրը հաղորդեց պատգամաւորների ժողովի մի անդամ, որը մի և նոյն ժամանակ և կօնգրէսի անդամ էր,—այդ հաղորդութեանը հետեւեց ժողովի ընդհանուր բողոք....

«Այդ տեսակ անաջողութիւնը դարձեալ չը պէտք է վհատեցնէ մեզ, ասեց զեկուցանողը։ Մենք չենք խնդրում ֆրանսիուհու համար քաղաքական իրաւունքներ, այլ միայն տղամարդուն հաւասար քաղաքացիական իրաւունքներ և վաղ թէ ուշ կը հասնենք մեր նպատակին։ Անճոռնի հակասութիւն է դա. թոյլ տալ որ կինը առևտրով զբաղվի, ճանաչել ամեն տեսակ դրամական, ֆինանսական օպերացիաներով աջողութեամբ զբաղվելու նրա ընդունակութիւնը, ճանաչել առևտրական գործերում նրա պատասխանատուութիւնը,—բայց մի և նոյն ժամանակ չը թոյլ տալ որ առևտրական կինը իրաւունք ունենայ մասնակցել առևտրական դատարանի ընտրութիւնների գործին, չը նայելով որ այդ դատարանի հետ կապված են նրա կենսական ամենանշանաւոր շահերը, չը նայելով որ նա տղամարդուն հաւասար՝ իր նիւթական շահերին վերաբերեալ անդադար դատեր ունի նոյն առևտրական դատարանում։ Բայց չը յուսահատվինք. եկող տարի մենք կրկին կը ներկայացնենք նոյն խնդրագիրը պատգամաւորների ժողովին և յոյս ունենանք որ մեր պաշտպանած օրինագիծը վաղ թէ ուշ հաւանութիւն կը ստանայ և սենատից, որտեղ նստած են մարդիկ, որոնք թէև սկզբունքով համաձայն են յիշեալ օրինագիծն ընդունելու անհրաժեշտութեան հետ, բայց որոնք պաշարված են դեռ ևս մի անգիտակցական աւանդական նախապաշարմունքով կնոջ, որպէս հանրապետութեան քաղաքացու, ամենատարրական իրաւունքների դէմ։

Ցեսնում էք, ուրեմն, թէ այս իմ յօդուածից, թէ Պարիզից գրած իմ թղթակցութիւններից, որոնց մէջ ես նկարագրում էի կանանց կօնգրէսը ու Պարիզի իգական արհեստաւորաց դպրոցները և աշխատեցի ծանօթացնել ընթերցողին պ. Բեօրդելէի կարդացած դասախօսութեան հետ կանանց քաղաքացիական իրաւունքների մասին,—որ կինը Ֆրանսիայում զօրաւոր ջանքեր է անում այժմ դուրս գալու քաղաքացիական այն անչափահաս դրութիւնից, որի մէջ նա գտնվում էր դարերից ի վեր։

Գրիգոր Արծրունի

բօր կոչված եկեղեցին դիմեց, որի մօտ գոյնզգոյն դրօշակներով պատրաստած վրանակի տակ աղօթելուց յետոյ՝ ժամը 2-ին հանդէսը վերջացրեց։ Որտեղից թափորն էր անցնելու՝ դուքանները փակ և փողոցները լի էին հասարակութեամբ. շինութիւնները տեղ տեղ զարդարված էին դրօշակներով։ Երեկոյեան ոչ հրաւառութիւն և ոչ էլ հրախաղութիւն եղաւ, գուցէ անձրևային եղանակի պատճառով։»

—

Թիֆլիսում թատրօնական սեզօնի սկսվելու պատճառով ժողովարանի ամարային շինութեան մէջ երեքշաբթի օրերը տրվող հայերէն և վրացերէն ներկայացումները վերջացան։ Այժմ հաստատապէս կարելի է ասել, որ կլուբի մէջ անդամների և հիւրերի համար ներկայացումներ տալու միտքը միանգամայն աջող հետևանք ունեցաւ։ Ցանկալի է, որ գալ տարի էլ նոյն ներկայացումները շարունակվէին, ուշադրութիւն դարձնելով, որ այն պիէսաները, որոնք տրվում են, աւելի ընտրովի և աւելի արժանաւոր լինէին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Պանդխտութեան արդէն յայտնի, բայց միշտ կենդանի և կարևոր հարցի մասին արտասահմանի մի հայ լրագրից առաջ ենք բերում հետևեալ յօդուածը, որի մի քանի կէտերը ուշադրութեան արժանի կարող են լինել։

«Մուշի, Վանի, Բիթլիսի և Էրզրումի հայ գիւղացիք 40 տարիէ ի վեր կը պանդխտին։ Ցորմէ հետէ չոգենաւը հեռաւոր երկիրներ մօտեցուց Հայաստանի մերձաւոր նաւահանգստին՝ Ցրապիզոնին՝ ալ մեր գիւղացիք թուչնոց նման երամներ կազմելով օտար աշխարհներ այց ելնել սկսան։ Հայերը կը պանդխտին ըսելով՝ չը հասկացուի բընաւ թէ սոքա քանի մը ամսով կը բացակային իրենց բերքերը ծախելու, առուտուր մ'ընելու և վերադառնալու համար. ոչ, այս գեղջուկներ ակամայ և բռնի կը թողուն իրենց տունը, տեղը և հետիոտ, լուսինը ծոց դնելով, (պարտատիրոջ երեսէն դիշերանց փախչիլ) կը ցրուին հեռաւոր տեղեր, ամենէն մօտիկը Պոլիս սեպելով. այն տեղեր կը մնան 5—15 տարի ստորին ծառայութիւններ ընելով։

Կան ոմանք որ հաշիւ կընեն թէ Թիւրքիայի Հայք իրենց արդի կացութեան մէջ աղատ լինելով արեան տուրքէ, զոր ամեն աղատ աղգը պարտի հատուցանել, և հայ երիտասարդութիւնը զօրանոցներու մէջ սեղմուելէ զերծ լինելով՝ Հայք բարօրութեան և բազմամարդութեան գիւրութիւններ կունենան։ Հիմնովին սխալ մ'է այս հաշիւ և Հայոց պանդխտութիւնը գինուորագրութեան ամենախիստ տեսակ մ'է, աւելի աղետալի հետևանքներով։ Հայ գիւղացիի տունը երիտասարդ մ'ամուսնացաւ, երկու շաբաթ ետքը ճանբու ցուպը ձեռք պիտի առնէ. կարաւանը իրեն կը սպասէ, պիտի երթայ, ուզէ չուզէ. կարգը իրեն եկած է. հայրը պանդխտութեան մէջ մեռած է, մեծ եղբայրը երեք տարի է որ վերադարձեր է հիւանդոտ, տկար, տան նեղութիւնը չատցեր է, հարսնիքի ծախուց պարտքն ալ նոր աւելցաւ, միւս եղբայրը Պոլիս կը գտնուի, բայց ալ չը կրնար տոկալ բեռ կրելով փոլոսներ (փոլոսներն՝ մէկ տարուան 100-ին 75 տոկոսով մուրհակներ են) վճարելու, ուստի ինքն ալ պիտի երթայ դէթ այդ եղբայր վերադարձնելու և չը թողլու համար որ սա երկրին և ընտանեաց սրտմաշուք կարօտը չառած իջնէ գերեզմանցը։

Մինչև Պոլիս չը վերջանար հայ պանդխտի ճամբան. այնտեղ չատցեր են բեռնակիրներ, գործ չէ մնացեր, բայց մեր գեղջուկ թէև անծանօթ, լեռնցիի պարզմտութենէ զատ ուրիշ բան չունի, հայերէն լեզուն ալ միայն հաղիւ կը խօսի, սակայն յուսահատութեամբ ինքզինք յորձանքի մէջ կը ձգէ, անծանօթ առաջնորդներու կը փարի, անխիղճ շահագէտներու կը յանձնէ ինքզինք և չոգենաւ կը մտնէ. ուր կերթայ.— Կոստանդնուպոլիս, Օտէսա, Ռումանիա, Եգիպտոս, Ամերիկա և ուր որ կը կարծէ թէ իր քամակին համար բեռ կրնայ գտնել. այդ օտար աշխարհներու անունները իր գլխի մէջ սովրեր է, առանց դրպրոցի մէջ դաս առնելու, գիտէ որ իրենց դրացի Միւքիկը Կոստանդնուպոլսի քանային մէջ պայթած ժայռերու ներքև մնացեր է. թէ Ռէս Խաչօն Պոլսոյ հիւանդանոցին մէջ վերեմով (թոքախտ) մեռեր է, թէ միւսը Կարսի մէջ տան փլատակի ներքև մնացեր է և ուրիշ մ'Ամերիկայի մէջ մեքենայի արկածի մը զոհ եղեր է։ Սակայն ինքն ալ կերթայ, կը տանի հետը առոյգ երկրագործի առողջութիւնը՝ ուժեղ բազուկներ, 2—250 քիլօ ծանրութիւն վերցնող կռնակ մը, որը իրեն օրը $1^1/_2$ ֆրանկ պիտի շահեցունեն ամենէն բախտաւոր պարագայի մէջ, և այդ գումարով պիտի վճարէ պարբերապէս առնէն ղրկուած մուրհակներ՝ իր սնունդէն, անհրաժեշտ ծախքերէն կտրելով, շուայլ սեղաններու հանդէպ սոխ ու հաց կրծելով և անօդ, անլոյս խոնաւ խցիկներու մէջ 5—6 հոգի իրարու քով խոնուած պառկելով։ Այս ամենը կը տանի նա, բայց եթէ գործը պատահի, եթէ հիւանդանայ կամ ինչպէս սովորական է մայրաքաղաքաց մէջ, այդ անարատ գեղջուկի վրայ մոլութիւններ յարձակին և անոր արիւնով ու քրտինքով վաստկուած դրամը անպատիւ կերպով վատնել տան և այդպէս նա չը կրնայ կամ չուզէ վճարել իր ընտանեաց մուրհակներ, այդ ատեն հոգ չըներ բնաւ Թիւրք կամ Հայ քաղաքացի վաշխառուն, նա արդէն նորա արտերը, նորա տնակը գրաւի առնելով դրամ փոխ տուեր է։ Հակառակ անլուր տոկոսներուն, հայ գիւղացին միշտ ստիպուած է դիմել այս Շայլօքներուն, զի իր հողի բերքը՝ արմտիք՝ սըտակ չըներ երկրին մէջ, դուրս չարտահանուիր, քանի որ երկրին մէջ կամուրջ մը, ճամբայ մ'իսկ չը չիներ 500 տարիէ ի վեր երկրին տուրքը առնող իշխանութիւնը, երկրին անապահով վիճակն ալ չը թողուր իրեն տաւարաբուծութեամբ զբաղիլ, միւս կողմէն տուրքեր սաստկութեամբ կը պահանջուին. թող ունենայ մեծատարած գետինները որ արժէք չունին՝ չը կրնար զանոնք մշակել, բայց պարտի անոնց տուրքը վճարել։ Ինչ պիտի ընէ ուրեմն գիւղացին. ահա հարկահաւաք պաշտօնեայն ձիաւոր ոստիկաններով գիւղը կը մտնէ, ալ ամապարելու է այդ խումբ ժամ մ'առաջ դուրս հանել գիւղէն, զի որչափ մնան այնչափ դառ, հաւ կը մորթուի և գարի, յարդ կը թափուին դոցա ձիերու ոտքին տակ. ուրեմն կաճապարէ, քաղաք կը հասնի, աղաներէն (վաշխառուներէն) մէկի հաղուստին, ոտքին կը փարի, քանի մը ղրուշ կառնու տուրքը վճարելու համար և մուրհակ կը յանձնէ, գիւղը կը դառնայ, անցագիրն ալ ծոցը և երկրորդ օրը կարաւանին կը խառնուի։ Այսպէս հարկահաւաքը և աւազակը վաշխառուին գերկը կը ձգեն գիւղացիներ և սա ալ դանոնք հեռաւոր երկիրներ կը ցրուէ։

Պանդխտութեան այս տարօրինակ զինուորներ երթալով թիւերնին կը ստուարացունեն, երկրի բազմամարդութիւնը օրըստօրէ կը նուազի, գիւղեր կը պարպուին, զի տան մէջ մէկ տղամարդ հաղիւ կը մնայ և մնացեալք օտարութեան մէջ կը մաշին աղի արցունք թափելով կամ յուսաբեկ՝ օղիի մէջ խեղդել կերթան իրենց ցաւը։ Ճիշդ հաշիւ չէ բռնուած թէ այսօր ոչչափ տոկոս կուտայ մեր հայրենիք այս ճիւաղային պանդխտութեան. բայց սա յայտնի է որ Վանայ և Մշոյ շրջակայ գիւղեր՝ 20—60 տարեկան 100 այր մարդոց մէջ 70-ը պանդուխտ են. այս վիճակիս մէջ կարելի է բազմամարդիլ և ընդհակառակն չը նուազիլ օր ըստ օրէ։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հնդկաստանի Կալկաթա քաղաքից գրում են. «Կալկաթայի և Ջիջրայի հայոց եկեղեցական պ. Թովմաս Մելքոնեան տեղական բարձր դատարանի վճռովն պաշտօնանկ եղած է և նոր եկեղեցական ընտրված է պ. Յարութիւն Գրիգոր Ազգարեան»։

—Բոլգարիայի Բուչչուկ քաղաքից գրում են արտասահմանի հայոց մի լրագրին. «Երէկ 7/19 օգոստոսի, Բուլգար կառավարութիւնը իւր սահմաններէն արտաքսեց Գազանճեան Յակոբ անուն հանրածանօթ ազգադաւ և Թրքամոլ հայը։ Այս կարգադրութիւն մեծ ուրախութիւն պատճառեց Բուսճուղի հայոց։ Թիւրք կառավարութիւնէն վարձեալ մի լրտես էր այդ Գազանճեան, որ տեղւոյս ազգային բոլոր գործերն Բ. Դրան հաղորդելու պաշտօնն ստանձնած էր»։

—Սոֆիայից հեռագրում են, որ ներկայումս Կօբուրգեան պրինցը պատում է Բոլգարիայի սահմաններում՝ անձամբ ծանօթանալու զօրքի դրութեան հետ։

—Կ. Պոլսից գրում են, որ նորից յարուցված է Կօբուրգեան պրինցի և Թիւրքաց սուլթանի տեսակցութեան հարցը։

—Պարլամենտական ընտրութիւնների առիթով Պարիզեան կոմսը դիմել է ժողովրդին մի հրաւիրագրով։ Այդ հրաւիրագիրը գրված է շատ ոգեւորված կերպով, որով ընտրողները հրաւիրվում են կուսելու հանրապետութեան դէմ։ Ի մեծ ցաւ կոմսի նրա այս փորձն էլ ոչինչ ապաւորութիւն չէ արել։

—Քաղաքական շրջաններում շարունակում են պտտել այն լուրերը, որոնք հաղորդում են թէ Բոլգարիան և Սերբիան զինվում են։ Աւստրիական լրագիրները այդ լուրերը չափազանցրած են համարում։

—Կրիտէից գրում են, որ իբր թէ Շաքիր-փաշան այն կարծիքն է յայտնել, որ կղզու հանդստութիւնը չի վերականգնի, եթէ իրան իրաւունք չը տրվի ամենայն խստութեամբ վերաբերվելու դէպի քրիստոնեաները։ Դժուար թէ Շաքիր-փաշան այդ սխալ քաղաքականութեան կողմնակից լինի, որովհետև արդէն Թիւրքաց այժմեան մինիստրները իրանց միակողմանիութեամբ հանդերձ հասկացել են, որ բռնութեան դիմելով Կրիտէից կարող են զրկվել։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սերբիայի Միլան թագաւորը շուտով կը հրատարակէ իր Երուսաղէմի ճանապարհորդութեան նկարագրութիւնը։ Գահից հեռացած թագաւորը, ինչպէս լսում է, մի առանձին սիրով է վերաբերվում դէպի գրական աշխատանքները, գուցէ համոզված լինելով, որ այդ աւելի գոհունակ և աւելի օգտաւէտ աշխատանք է, քան թէ անվերջանալի կերպով «դիպլոմատութիւն» անելը։

* * *

Բավարիայի հոգեպէս հիւանդ թագաւոր Օտտոն այս օրերս քիչ էր մնացել, որ զոհվի։ Այն միջոցին, երբ նա նախաճաշում էր իր պալատի սեղանատանը, յանկարծ առաստաղի մի մասը փլեց և ծանր կերպով վիրաւորեց սպասաւորին. ինքն թագաւորը հազիւ աղատվեց այդ վտանգից։ Բանից երևեցաւ, որ պալատի շինութիւնը այնքան խախուտ և աւերված է, որ կարող է այդպիսի շատ վտանգներ առաջ բերել.... Նախանձելի չէ, եթէ համ թագաւորն է հոգեպէս հիւանդ, համ էլ պալատն է խարխուլ...

* * *

Գաւառական մի փոքրիկ քաղաքում նախաջրհեղեղեան սովորութիւններ են տիրապետում։ Այդ փոքրիկ քաղաքում կայ հայոց մի օրիորդական դպրոց. այդ դպրոցի վրա մեծ ազդեցութիւն ունի մի տէրտէր։ Այդ տէրտէրը պահանջում է, որ դպրոցի վարժուհին,—որը անկասկած չլեպապա է կրում—դպրոցի մէջ ապրի, դպրոցից դուրս չը գնայ, այնտեղ պահանջում են, որ վարժուհին ոչ մի վարժապետի հետ չը խօսի, ոչ մի մարդու իր տանը չընդունի, մի խօսքով վարի մի այնպիսի առանձնացած, քաշված և փակված կեանք, որի նմանը գուցէ ոչ կուսանոցում՝ կարելի է պատահել, և ոչ էլ գիւղական նորահարսերի շրջանում... Եւ այդ աստուածավախ քաղաքը Թէլաւն է....

* * *

Պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ Բելգիայում զրագէտ մարդիկ կազմում են միայն 60,2%, իսկ գրագէտ կանայք՝ 55%։ Ստատիստիական տեղեկութիւնները մի և նոյն ժամանակ ցոյց են տալիս, որ երկրի այն մասում, ուր աւելի է կղերականութեան ազդեցութիւնը, այնտեղ աւելի փոքր տոկոս են կազմում գրագէտները, իսկ որտեղ հոգևորականութիւնն այնքան մեծ ներգործութիւն չունի, այնտեղ գրագէտները աւելի շատ են թուում։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 28 օգոստոսի։ Ռուսաց Օգոստափառ Ընտանիքը ժամանակ է անցկացնում Ֆրէդէնսբօրգ ամրոցում իր շրջանում։ Մինչև այժմ որ և է պաշտօնական տօնախմբութիւններ չեն եղել։

ՎԻԵՆՆԱ, 28 օգոստոսի։ Աւազակային յարձակման երկրորդ զոհը Եարօսլավլում, լէյտենանտ Շուբէրտ երէկ վախճանվեցաւ։ Երկու օֆիցէրներ մահուան պատճառով (երկրորդ սպայի ազգանունը Դօնատօ է) յանցաւորներին գտնելը և յանցանքի պատճառների պարզելը, ի հարկէ, աւելի դժուարացել են։ Այն ենթադրութիւնները, որ իբր թէ սպանութիւնը պանսլավիստների վրէժխնդրութեան, մենամարտի կամ յարձակման հետևանք է, ոչնչով չէ հաստատվում և վարչութիւնը կարծում է, որ այդ յարձակումն կողոպտելու նպատակով է եղել, որովհետև թէպէտ յարձակումն մի և նոյն անձն է կատարել, բայց առանձին առանձին Դօնատօի և Շուբերտի դէմ։ Բուռթ զէնքով վայր գցելով օֆիցէրներին, յանցաւորը սկսեց կողոպտել նրանց, բայց նրան արգելեցին չուտով վրա հասնող մարդիկը։

ԱԹԷՆՔ, 29 օգոստոսի։ Այստեղ հասած լուրերին նայելով՝ մարկիզ Սալիսբրին խորհուրդ է տուել Սուլթանին կրիտացիներին զիջումներ անել։ Կրիտէ կղզուց հաղորդում են, որ քրիստոնեաները բարեկամաբար են հանդիպում Թիւրքաց զօրքերին և թէ խռովութիւններին վերջ է տրվում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 օգոստոսի։ Երէկ այստեղի համալսարանում, դասախօսութիւնները սկսելուց առաջ, մաղթանք կատարվեց, որից յետոյ բեկտոր Վլադիսլավլեվ դիմեց ուսանողներին մի ճառով, որի մէջ ի միջի այլոց, ասեց. «Շատ ուրախալի է այն փաստը, որ մեր համալսարանների երիտասարդութիւնը իր զգացմունքներով իսկապէս միանում է ամբողջ ռուս ժողովրդի հետ։ Անցեալ տարի մենք բաղդ ունեցանք ներկայ լինելու Թագաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհու հանդիսաւոր կերպով մայրաքաղաք մտնելուն, հոկտեմբերի 17-ի երկաթուղային խորտակումից յետոյ։ Ուսանողները հանդիսաւոր կերպով դիմաւորեցին Թագաւորին և Թագուհուն։ Հայրենասիրական զգացմունքների արթնանալը շատ բարձրացրեց մեր ուսանողութեան նշանակութիւնը հասարակութեան աչքում։ Ինչպիսի բերկրութեամբ Նա համոզվեց, որ մեր երիտասարդ սերունդը լայնատարած Ռուսաստանի հետ միասին կանգնած է բարձրութեան վրա, զգում է մի և նոյն ուրախութիւնները և վշտերը, և հետևաբար կը շարունակէ ռուսաց պատմութիւնը, և չի ընդհատի նրան։ Ի հարկէ ռուսական զգացմունքը կամի և կամրանայ Պետերբուրգի համալսարանի ուսանողների մէջ, եթէ կը մեծանայ նրանց ջանքը Ռուսաստանին և Թագաւորին ապագայում ծառայելու համար։ Այդպիսի զաւակներով էլ կը պարծենայ ձեր «Alma Mater»։ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը երէկ վերադարձաւ Պետերբուրգ։ «Новое Время» լրագրի հաղորդած լուրերին նայելով, գինուորական-բժշկական ճեմարան մտնող լութերական դաւանութեան պատկանող ուսանողութիւնը կը սահմանափակվի որոշ տոկոսով, ըստ որում, երբ որոշ տոկոս նշանակվեց ճեմարանը մտնել ցանկացող հրէաների համար, դրանք սկսեցին մեծ թիւով ընդունել լութերական դաւանութիւն։

ԲԵԼԳՐԱԴ, 29 օգոստոսի։ Նատալիա թագուհին հեռագրել է Ալէքսանդր թագաւորին, որ այս օրերս նա կը գայ Բելգրադ։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 29 օգոստոսի։ Յէսարեվիչ թագաժառանգը հինգշաբթի Կիլի վրայով ուղևորվում է Գերմանիա, ներկայ լինելու գերմանական զօրքերի աշնանային զօրահանդէսին։—Այրի Վիկտորիա թագուհին այստեղ կը հասնի սեպտեմբերի 4/16-ին։

ԼՕՆԴՕՆ, 29 օգոստոսի։ «Times» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից։ «Սուլթանը հրամայեց Թիւրքաց մինիստրների առանձին ժողովում խորհրդակցել այն միջոցների մասին, որոնք վերջ պէտք է դնեն Հայաստանում կատարվող անկարգութիւններին։ Մինիստրներին հրամանագրած է, որքան կարելի է բաւարարութիւն տալ ազգաբնակութեան այն գանգատներին, որոնց ճշդութիւնը կը հաստատվի, մի և նոյն ժամանակ առանձին արտօնութիւններ չը տալով ազգաբնակութեան որ և իցէ դասին և չը թոյլ տալ կարծելու, որ կառավարութիւնը գործում է արտաքին ճնշումների ազդեցութեան տակ։ Հայաստանի վերաբերմամբ մի քանի պետութիւնների առաջադրութիւններին Բ. Դուռը կը պատասխանի, որ թէև նա ձեռք կառնի անհրաժեշտ միջոցներ իր նահանգներում հասարակական խաղաղութիւն պահպանելու համար, բայց մի և նոյն ժամանակ նա չէ կարող բացառական միջոցներ գործադրել կայսրութեան որ և է մասում»։

ՎԻԵՆՆԱ, 29 օգոստոսի։ Սերբիայի նախկին թագաւոր Միլան երէկ ներկայ էր գերմանական ուսումնարանական ընկերութեան ընդհանուր ժողովին և ընծայեց 100 դուլդէն։ Ինչպէս պատմում են, երբ Կարլ-Լիւդվիգ Վերին-Ռնդարիայում Կարմիր-խաչի հիմնարկութիւնները քննելու ժամանակ՝ մի ճառ արտասանեց, որի մէջ յայտնեց, որ թէև Կարմիր-խաչի ընկերութիւնը միշտ պատրաստ պէտք է լինի հայրենիքին ծառայելու, այնու ամենայնիւ հիմք կայ կարծելու, որ խաղաղութիւնը կը պահպանվի ամենապակաս 10 տարի։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 29 օգոստոսի։ Երէկ ռուսաց և Դանիայի Օգոստափառ Ընտանիքները ուղեւորվեցան Շարլոտէնլունդ և նախաճաշեցին Դանիայի թագաժառանգի մօտ։ Ճանապարհին Բարձրագոյն Անձինքները այցելեցին Բէրնսդորֆի ամրոցը, նայեցին «Ovre Gavn» գաղանանոցը և երկաթուղով վերադարձան Ֆրէդէնսբորգ։ Զորեքշաբթի Թագաւոր Կայսրի անուանակոչութեան պատճառով ռուսաց եկեղեցում մաղթանք պէտք է լինի, որից յետոյ նախաճաշ կառաջարկվի Կայսերական «Держава» նաւի վրայ—Շուտով այստեղ կը գան չվէդական թագաւորը և թագուհին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 28-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ—	95 ր.	85 »
Բերլինի վրա 100 մարկ —	46 »	82½ »
Փարիզի վրա 100 ֆրանկ —	38 »	05 »
Ոսկի — արժէ —	7 »	63 »
Մաքսային կուպօններ —	152 »	75 »
Արծաթ — — —	1 »	10 »
Բորսային դիսկօնտներ —	6 և 7%	»
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	98 »	87 »
— — — — 2-րդ —	98 »	62 »
— — — — 3-րդ —	98 »	50 »
— — — — 4-րդ —	98 »	50 »
— — — — 5-րդ —	98 »	50 »
— — — — 6-րդ —	98 »	62 »
Նոր 4%	82 »	87 »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	98 »	62 »
— — 2-րդ —	98 »	62 »
— — 3-րդ —	98 »	62 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	263 »	50 »
— երկրորդ —	244 »	50 »
5½% բէնտա	102 »	25 »
Ոսկեայ բէնտա	173 »	— »
Եօթերորդ կօնսօլիդ. փոխառ.	140 »	— »
Նոր երկաթուղային բէնտա	98 »	62 »
5% գրաւակ. թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	148 »	— »
— — թղթադ.	92 »	37 »
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի	98 »	12 »
Գիւղական բանկի	99 »	— »
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	— »	— »
— —Բուենոս-Այրեսի-18 և 43տ.	— »	— »
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	94 »	75 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	94 »	— »
Օդէսայի — —	93 »	50 »
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	— »	—

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը անորոշ է։

Խմբագիր - հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, *որը երկար տարիներ պաշտօն է վարել կառավարչական ուսումնարանում, ցանկանում է աւագ-ուսուցչի կամ առհասարակ ուսուցչութեան պաշտօն ստանալ հայոց ուսումնարաններում։ Պայմանների մասին գրաւոր կամ բերանացի կարելի է տեղեկանալ „Մշակի“ խմբագրատանը, ուր և կարելի է իմանալ հասցէն։* 1—5

ՀԱՒԼԱԲԱՐԻ Ս. ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ *խնամակալ վարչութիւնը սրանով յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ նոյն ուսումնարանում* 1889/90 *ուսումնական տարվայ համար աշակերտուհիներ ընդունվում են օգոստոսի* 21—31-*ը։* 3—3

ԶԱՑՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ

Մի երիտասարդ, որ աւարտել է հայկական ճարտարութիւնը և ստացել է իրաւունք ուսուցչութեան հոգևոր ծայրագոյն իշխանութիւնից, ցանկանում է ուսուցչութեան պաշտօն։ Պատրաստ է գաւառներ գնալու։ Ցանկացողները մանրամասն պայմանների մասին թող դիմեն՝ Тифлисъ, Авлабаръ, Свящ. Казаросу Овсепьянцу. 3—3

Գ. Կարգի մի **ՈՒՍՈՒՑԻՉ** *ցանկանում է տեղ ունենալ մեր դպրոցներում։ Ցանկացողները թող դիմեն նրան իրանց պայմաններով հետևեալ հասցէով.*
Эривань, Сиракану Теръ-Мартиросянцъ։ 3—3

Մի քանի տարի ուսուցչութեամբ պարապող ՕՐԻՈՐԴ, *որը աւարտել է ռուսաց միջնակարգ դպրոցում, ցանկանում է հայոց դպրոցներում դասատու լինել ռուսաց լեզուից և թւաբանութիւնից առաջին երեք բաժանմունքներում, նաև վարժուհի կար ու ձևի և ձեռագործութեան, շաբաթական* 24 *դասով և տարեկան* 500 *բուբլի ռոճիկով։ Հասցէն՝* Ново-Баязетъ, Кеворку Арцруни. 3—5

Երրորդ կարգի մի ուսուցիչ, որ կարող է աւանդել հայոց լեզուով աւանդելի առարկաները, ցանկանում է տեղ ունենալ ծխական դպրոցներում։ Ցանկացողները թող դիմեն իրանց վերջնական պայմաններով՝ ԵՐԵՒԱՆ Ցարութիւն Թադէոսեանցին։ 2—3

ԹԻՖԼԻՍԻ Ս. ԳԱՑԵԱՆԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ *վարչութիւնը յայտնում է թէ աշակերտուհիների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի* 25-*ից։* 2—3

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ

Հայոց, ռուսաց լեզուների և դպրոցական ուրիշ առարկաների համար։ Ցանկացողները իրանց պայմաններով որքան կարելի է շուտ պէտք է դիմեն, պ. Մալումեանին, „Մշակի“ խմբագրատանը, ժամը 1—2։ 2—3

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, *որ վարժապետութեան իրաւունք ունի, ցանկանում է ռուսաց լեզուի և այլ առարկաների դասեր ունենալ հայոց դպրոցներում։ Ցանկացողները կարող են դիմել—Ախալցխա, Յովհաննէս Մալխասեանց։* 2—3

ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՏԱՆ

ՄԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ

ցանկանում է աշակերտուհիներ պատրաստել։ Հասցէն. Նորաշէնի փողոց, տուն Պարունբէգովի, № 8. 4—10

ԱՐՄԱՒԻՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՒԻՐՎՈՒՄ ԵՆ *Հայոց դպրոցներում ուսուցչութեան իրաւունք ստացած ուսուցիչներ և ուսուցչուհիներ.* 1) *Օրիորդաց դպրոցի աւագ ուսուցչուհի շաբաթական* 22 *դասով հայոց լեզուից, վայելչագրութիւնից, երգեցողութիւնից և ձեռագործից, ռոճիկ* 550 *ր. բնակարան և վառելափայտ.* 2) *Ուսուցչուհի շաբաթական* 17 *դասով ռուսաց լեզուից, վայելչագրութիւնից և գծագրութիւնից, ռոճիկ* 500 *ր.* 3) *Տղայոց դպրոցի ուսուցիչ* 17 *դասով ռուսաց լեզուից, վայելչագրութիւնից և գծագրութիւնից, ռոճիկ* 400 *ր. բնակարան և վառելափայտ.* 4) *Երկու դպրոցների ուսուցիչ թւաբանութեան շաբաթական* 17 *դասով, ռոճիկ* 500 *ր.*

Ցանկացողներին առաջարկում եմ գրել իրանց խնդրագիրները յանուն Աստրախանի թեմի սրբազան առաջնորդ գերապատիւ Գէորգ եպիսկոպոս Սուրենեանի և ուղարկել ինձ։

Նախագահ հոգաբարձութեան՝ Գաբրիէլ քահանայ Թուելեանց
3—3

ՄԻ ՕՐԻՈՐԴ *որ աւարտել է քաղաքային պրոֆէսիոնալ դպրոցում, ցանկանում է Հայոց ծխական դպրոցներում ՁԵՌԱԳՈՐԾԻ դասեր տալ։ Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատանը։* 4—5

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

որ աւարտել է Բագուի բէալական դպրոցում, ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ ՏԱԼ։ Կարող է պատրաստել աշակերտներ միջնակարգ դպրոցների համար. համաձայն է և կրկնութիւններ անել աշակերտների հետ։ Ցանկացողները հասցէն կարող են իմանալ «Մշակի» խմբագրատանը։
3—5

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

ԵՒ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Օր. Ս. Վ. ԱՐՂՈՒԹԻՆՍԿԻՑ—ԴՕԼԳՈՐՈՒԿԻՑ

Երեխաների ընդունելութիւնը Օգոստոսի 20-*ից։ Պարապմունքները սկսվելու են Սեպտեմբերի* 1-*ից։ Ուսումնարանը գտնվում է Ֆրէյլինսկայա փողոցում, տուն Կօրգանովի,* № 4։
3—3 (*Ե. Հ. Չ.*)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՏԱՆՏԻԿԻՆ ԵՒ ԽՈՀԱՆՈՑ

ԵՐԿՈՒ ՄԱՍԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԳԻՐՔԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

400-ի չափ տեղական և եւրոպական՝ աժան, համեղ և անվնաս կերակուրներ պատրաստելու եղանակ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

200-ից աւելի տնտեսական գիտելիք՝ քաղցրաւենիք. թթուեղէն. պտուղների, բանջարեղէնի և կանաչեղէնի պահպանելը և չորացնելը. կաթնատնտեսութիւն և զանազան գիտելիք։

Կազմեց Ց. ՄԵԼԻՔ-ԲԱԽՏԱՄԵԱՆՑ

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Վաճառվում է բոլոր յայտնի գրավաճառանոցներում և Մարտիրոսեանի տպարանում։ Վերջնիս մօտ 10-ից աւելի գնողին՝ 10 տոկոս զիջումն կը լինի։
2—8

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ՏԻԿԻՆ ԿՈՒԷՍՏԻ

(Վելիամինովսկայա փողոց, № 34)

Կը բացվի օգոստոսի վերջին։ Պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների բարձր դասատների համար։ Ֆրանսերէն և գերմաներէն դասեր և գործնական վարժութիւն։ 7—10

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԽԷՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՅԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ *կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկովսկու և Ազմուրովի դեղատներում։ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ, ԲԷԿԿԷՐԻ մօտ, ՔՈՒԹԱՑԻՍՈՒՄ՝ կոկոչևի մօտ, ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ, Բրօխնօցկու մօտ և ԵԿԱԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։* 28—52 (*Հ.*)

ЗУБНЫЯ КАПЛИ: коп. 50 к.
ЗУБНОЙ ПОРОШОКЪ: коп. 30 к.
ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ: фл. 80 к.
А. ШТЕХЕРЪ

ԿՕՇԿԱԿԱՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

ԱՂԱՍԻ ՏԷՐ-ԶԱՔԱՐԵԱՆՑԻ

Գոլովինսկի, տուն Բէյտերի, № 11

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ չափաւոր գներով։ Արհեստանոցում ծախվում են նոյնպէս տղամարդկանց և ԶԻՆՈՐԱԿԱՆ ամեն տեսակ պատրաստի կօշիկներ։
3—10 (*Հ*)



Дозволено цензурою, Тифлисъ 30 Августа 1889 г. Типографія Канцеляріи Главноначч. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.